Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Չուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Համակարգիչներ և կապի միջոցներ	3	33,33
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի

հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը, այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 3-20 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

4.16 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորագրած փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված համակարգին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են: Բացի այդ, Բանկը չունի կենսաթոշակային այլ վճարներ և հաշվեգրում պահանջող այլ նշանակալի փոխհատուցվող վճարներ:

4.18 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.19 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.20 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ ԿԲ, պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Գատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխառվածությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխառվածությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, դեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխառվածությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 28 ծանոթագրությունը:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Վարկեր և փոխառվածություններ հաճախորդներին	10,051,053	10,073,501
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	670,753	499,496
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	157,702	49,319
Ֆակտորինգ	1,660	193
Հակադարձ ռեպո գործառնություններ	49,633	15,372
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեզրկված տոկոսներ	1,164,481	367,211
Այլ տոկոսային եկամուտներ	-	18
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	12,095,282	11,005,110

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Հաճախորդների հաշիվներ	4,972,137	4,743,536
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	379,325	513,176
Կառավարության վարկեր	1,234,280	1,278,353
Ռեպո գործառնություններ	12,652	-
Ընդամենը տոկոսային և մնանատիպ ծախսեր	6,598,394	6,535,065

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Դրամարկղային գործառնություններ	161,663	155,492
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	955,311	771,750
Վճարային քարտերով գործառնություններ	273,253	262,287
Պետական և տեղական բյուջեի հետ հաշիվների սպասարկման գծով վճարներ	1,554	1,797
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	19,482	10,511
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	182,193	47,422
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	63,201	63,900
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,656,657	1,313,159

Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	61,026	48,626
Վճարային քարտերով գործառնություններ	133,482	121,555
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	12,402	3,324
Բորսայական ծառայություններ	1,917	-
Այլ ծախսեր	282	3,200
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	209,109	176,705

8 Ջուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	19,089	56,914
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	1,647,912	1,434,689
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	1,667,001	1,491,603

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Ստացված տույժեր և տուգանքներ	414,814	346,065
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	9,040	-
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	12,494	14,533
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ օգուտ	50,751	-
Այլ եկամուտ	11,832	10,636
Ընդամենը այլ եկամուտներ	498,931	371,234

10 Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 18)	1,837,675	1,751,239
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 22)	17,241	8,104
Ընդամենը վարկային կորուստների արժեզրկման ծախս	1,854,916	1,759,343

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Աշխատավարձ	2,328,652	1,947,555
Սոցիալական ապահովագրության վճարներ	228,610	180,577
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	2,557,262	2,128,132

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	106,978	79,765
Գովազդի ծախսեր	70,988	185,547
Գործուղման ծախսեր	14,628	14,414
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	112,938	110,334
Վարձակալության գծով ծախսեր	877,529	787,903
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	171,296	164,940
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	23,922	42,042
Անվտանգության գծով ծախսեր	96,137	88,196
Հիմնական միջոցների օտարումից կորուստներ	-	3,057
Ներկայացուցչական ծախսեր	57,900	49,698
Գրասենյակային ծախսեր	43,801	32,678
Վճարված տուգանքներ	2,715	2,610
Ավանդների ապահովագրություն	106,170	94,547
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս	-	30,382
Համակարգչային ծրագրերի սպասարկում	53,832	51,658

	2011	2010
Հազար ՀՀ դրամ		
Ինկասացիոն ծառայություններ	56,067	60,740
Բռնագանձված գրավների իրացումից վնաս	118,483	15,818
Այլ ծախսեր	102,669	66,436
Ընդամենը այլ ծախսեր	2,016,053	1,880,765

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2011	2010
Ընթացիկ հարկ	268,569	452,578
Հետաձգված հարկ	247,778	(161,968)
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	1,911	10,494
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	518,258	301,104

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2010թ.՝ 20%)։ ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև։ Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով։

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2011	Արդյունավետ դրույքաչափ (%)	2010	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	2,324,789		1,305,596	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	464,958	20	261,119	20
Չհարկվող եկամուտ	(2,569)		-	-
Չնվազեցվող ծախսեր	56,634	2	23,415	2
Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության բացասական արդյունք (Դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	(10,150)	-	6,076	-
Նախորդ տարվա շահութահարկի ճշտում	1,911	-	10,494	1
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	518,258	22	301,104	23

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2010թ.		2011թ.	
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	29,816	(553)	-	29,263
Վաճառքի համար նատչելի արժեթղթեր	114,516	(40,041)	35,249	109,724
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	144,332	(40,594)	35,249	138,987
Պայմանական պարտավորություններ	(21,280)	(9,329)	-	(30,609)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(10,660)	3,888	-	(6,772)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(187,830)	(201,743)	-	(389,573)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(219,770)	(207,184)	-	(426,954)
Ձուտ հետաձգված հարկային պարտավորություն	(75,438)	(247,778)	35,249	(287,967)

Հազար ՀՀ դրամ	2009թ.		2010թ.	
	դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	26,970	2,846	-	29,816
Վաճառքի համար նատչելի արժեթղթեր	99,854	(388)	15,050	114,516
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	126,824	2,458	15,050	144,332
Պայմանական պարտավորություններ	(14,083)	(7,197)	-	(21,280)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(9,479)	(1,181)	-	(10,660)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(355,718)	167,888	-	(187,830)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(379,280)	159,510	-	(219,770)
Ձուտ հետաձգված հարկային պարտավորություն	(252,456)	161,968	15,050	(75,438)

14 Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ԶԶ ԿԲ-ում

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	7,637,429	6,075,828
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	8,422,878	8,857,416
Ներառվում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	16,060,307	14,933,244
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	168,439	263,482
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	16,228,746	15,196,726
Դրամական միջոցների հոսքերում ներառված կանխիկ դրամական միջոցներ և հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	16,060,307	14,933,244
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ (ծանոթ. 16)	2,589,223	3,136,608
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,649,530	18,069,852

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 8%-ի և արտարժույթով որոշ միջոցների 12 %-ի չափով: Այդ միջոցները 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 8,238,019 հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,414,086 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2011թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկային պարտավորությունների մարում գրավի սեփականության իրավունքի փոխանցման միջոցով 1,005,732 հազար դրամ գումարով (2010թ.՝ 91,377 հազար դրամ):

15 Թանկարժեք մետաղներ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային ոսկի	86,493	77,078
Ընդամենը թանկարժեք մետաղներ	86,493	77,078

16 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Թղթակցային հաշիվներ	2,589,223	3,136,608
Ներառվում է դրամական միջոցների հոսքեր մասին հաշվետվությունում	2,589,223	3,136,608
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	800,746	376,160
Այլ հաշիվներ	137,024	55,524
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,526,993	3,568,292

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,471,868 հազար դրամ գումարով (57%) հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, (2010թ. երկու բանկերում՝ 2,436,340 հազար դրամ (78%)):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդները բանկերում ներառում են VISA վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխաբային գումարները 496,801 հազ. դրամի չափով (2010թ.՝ 376,160 հազ. դրամ):

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Առևտրային ածանցյալ գործիքներ						
Սվոփեր-արտարժույթային	4,488,480	79,047	-	7,432,794	306,822	6,510
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	4,488,480	79,047	-	7,432,794	306,822	6,510

2011թ-ին Բանկը կնքել է 2 սվոփի պայմանագրեր ոչ ՏՀԶԿ երկրի բանկի հետ: Համաձայն պայմանագրերից մեկի ձեռք է բերում 3,175 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով 2,500 հազ. Եվրո, և պարտավորվում է հետագայում վաճառել 3,175 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով տոկոսագումար 0.31 % դրույքաչափով: Մյուս պայմանագրի համաձայն՝ Բանկը ձեռք է բերում 8,255 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով 6,500 հազ. Եվրո, և պարտավորվում է հետագայում վաճառել 8,255 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով տոկոսագումար 0.29 % դրույքաչափով:

2010թ-ին Բանկը կնքել է 2 սվոփի պայմանագրեր ոչ ՏՀԶԿ երկրի բանկի հետ: Համաձայն պայմանագրերից մեկի ձեռք է բերում 7,710 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով 6,100 հազ. Եվրո, և պարտավորվում է հետագայում վաճառել 7,710 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով տոկոսագումար 0.30 % դրույքաչափով: Մյուս պայմանագրի համաձայն՝ Բանկը ձեռք է բերում 10,112 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով 8,000 հազ. Եվրո, և պարտավորվում է հետագայում վաճառել 10,112 հազ. ԱՄՆ դոլար, վճարելով տոկոսագումար 0.30 % դրույքաչափով:

2010թ-ին Բանկը կնքել է սվոփի պայմանագրեր ՀՀ առևտրային բանկի հետ, համաձայն որի տրամադրում է՝ 955,260 հազ. ՀՀ դրամ՝ ձեռք բերելով 2,000 հազ. Եվրո, և պարտավորվում է հետագայում վաճառել 2,000 հազ. Եվրո, ստանալով տոկոսագումար 7.0% դրույքաչափով:

18 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	86,426,627	77,776,205
Ֆակտորինգ	-	223
Օվերդրաֆտ	232,765	-
	86,659,392	77,776,428
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(2,455,262)	(1,417,470)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	84,204,130	76,358,958

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեզրկված տոկոսները կազմում է 2,459,063 հազար դրամ (2010թ.՝ 2,512,964 հազար դրամ):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 14.7%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 12.3 %, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 12%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 19%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 15.4%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 14.6% (2010թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 13.6%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 13 %, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 13.8%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 18.6%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 18%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 14.3%):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 27,583,957 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 32%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2010թ՝ 30,857,111 հազար դրամ կամ 40%՝ տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,221,899 հազար դրամ (2010թ՝ 467,269 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդյունաբերություն	16,582,230	25,457,982
Գյուղատնտեսություն	594,489	362,205
Շինարարություն	5,310,767	2,939,119
Տրանսպորտ	4,386,341	764,810
Առևտուր	21,326,569	15,102,871
Սպասարկում	4,498,725	4,337,743
Սպառողական	15,758,876	12,360,083
Հիփոթեքային	11,707,196	11,105,730
Այլ	6,494,199	5,345,885
	86,659,392	77,776,428
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(2,455,262)	(1,417,470)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	84,204,130	76,358,958

Վարկերի և փոխառվածությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի
 հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2011									
	Արդյունա- բերություն	Գյուղատնտես- ություն	Շինարար- ություն	Տրանս- պորտ	Առևտուր	Սպասար- կում	Սպառող- ական	Հիփոթե- քային	Այլ	Ընդամենը
2011թ. հունվարի 1 դրությամբ	527,402	7,244	81,718	15,296	296,569	43,377	155,745	236,660	53,459	1,417,470
Տարվա ծախս	614,836	5,324	96,219	198,058	304,649	276,035	112,935	219,186	10,433	1,837,675
Դուրսգրում	(508,282)	-	(82,099)	-	(501,836)	(88,381)	(445,031)	(338,335)	-	(1,963,964)
Վերադարձ	17,078	-	71,936	-	395,163	-	447,304	232,600	-	1,164,081
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>651,034</u>	<u>12,568</u>	<u>167,774</u>	<u>213,354</u>	<u>494,545</u>	<u>231,031</u>	<u>270,953</u>	<u>350,111</u>	<u>63,892</u>	<u>2,455,262</u>
Անհատական արժեզրկում	521,585	-	79,980	6,496	284,577	-	226,623	175,400	-	1,294,661
Խմբային արժեզրկում	129,449	12,568	87,794	206,858	209,968	231,031	44,330	174,711	63,892	1,160,601
	<u>651,034</u>	<u>12,568</u>	<u>167,774</u>	<u>213,354</u>	<u>494,545</u>	<u>231,031</u>	<u>270,953</u>	<u>350,111</u>	<u>63,892</u>	<u>2,455,262</u>
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	<u>7,999,140</u>	<u>-</u>	<u>266,598</u>	<u>85,753</u>	<u>316,622</u>	<u>-</u>	<u>327,505</u>	<u>727,969</u>	<u>-</u>	<u>9,723,587</u>

Հազար ՀՀ դրամ	2010									
	Արդյունա- բերություն	Գյուղատնտես- ություն	Շինարար- ություն	Տրանս- պորտ	Առևտուր	Սպասար- կում	Սպառող- ական	Հիփոթե- քային	Այլ	Ընդամենը
2010թ. հունվարի 1 դրությամբ	293,828	2,974	17,617	32,058	288,165	27,030	128,541	271,306	32,146	1,093,665
Տարվա ծախս/(հակադարձում)	355,941	(3,504)	73,101	93,600	317,023	16,347	402,694	431,712	64,325	1,751,239
Դուրսգրում	(126,871)	(46)	(9,000)	(110,362)	(1,238,372)	-	(696,481)	(923,048)	(43,012)	(3,147,192)
Վերադարձ	4,504	7,820	-	-	929,753	-	320,991	456,690	-	1,719,758
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>527,402</u>	<u>7,244</u>	<u>81,718</u>	<u>15,296</u>	<u>296,569</u>	<u>43,377</u>	<u>155,745</u>	<u>236,660</u>	<u>53,459</u>	<u>1,417,470</u>
Անհատական արժեզրկում	287,132	-	55,844	-	154,236	-	-	63,012	-	560,224
Խմբային արժեզրկում	240,270	7,244	25,874	15,296	142,333	43,377	155,745	173,648	53,459	857,246
	<u>527,402</u>	<u>7,244</u>	<u>81,718</u>	<u>15,296</u>	<u>296,569</u>	<u>43,377</u>	<u>155,745</u>	<u>236,660</u>	<u>53,459</u>	<u>1,417,470</u>
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	<u>1,088,169</u>	<u>-</u>	<u>351,733</u>	<u>-</u>	<u>869,610</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>252,703</u>	<u>-</u>	<u>2,562,215</u>

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական ձեռնարկություններ	2,796,459	2,622,177
Մասնավոր ձեռնարկություններ	47,676,781	42,506,348
Ֆիզիկական անձիք	26,982,265	26,552,360
Անհատ ձեռնարկատերեր	6,744,824	3,582,579
Հաշվեգրված տոկոսներ	2,459,063	2,512,964
	86,659,392	77,776,428
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(2,455,262)	(1,417,470)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	84,204,130	76,358,958

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիփոթեքային	11,182,005	10,094,151
Սպառողական	8,805,217	6,280,640
Ավտոմեքենաների ձեռքբերման	4,083,934	6,248,438
Առևտրային	2,038,648	2,834,832
Այլ	872,461	1,094,299
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	26,982,265	26,552,360

Ինչպես նշված է 30 ծանոթագրությունում, 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելի ժամկետային վերլուծությունը բացահայտված է 31 ծանոթագրությունում: Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժուքային, իրացվելիության և տոկոսային ռիսկը բացահայտված է 32 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 29 ծանոթագրությունում:

19 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	12,690	12,690
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	4,081,826	5,469,219
Ընդամենը ներդրումներ	4,094,516	5,481,909

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2011		2010	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	9.0-15.41%	2012-2028	6.93%-12%	2011-2028

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 917,393 հազ. դրամ իրական արժեքով (2010թ.՝ ոչինչ) վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում առանձին տողում (Ծանոթ.26):

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով նվազեցված արժեգրկման կորուստներով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Բանկը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

20 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ.գծով կապ. ներդր.	Համակարգ. չային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա միջոցներ	Գրասենյակային սարքավորում և այլ հիմնական միջոցներ	Անավարտ շիրարարություն	Ընդամենը
ՍԿՁԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ							
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	932,011	322,574	458,938	66,365	1,106,662	93,484	2,980,034
Ավելացում	144,497	14,854	119,673	63,306	282,454	247,081	871,865
Վերադասակարգում	5,292	-	-	-	-	(5,292)	-
Օտարում	-	-	(33,782)	-	(3,629)	-	(37,411)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,081,800	337,428	544,829	129,671	1,385,487	335,273	3,814,488
Ավելացում	3,132	40,350	105,576	100,462	240,533	13,917	503,970
Օտարում	-	(2,879)	(15,204)	(55,791)	(16,309)	-	(90,183)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,084,932	374,899	635,201	174,342	1,609,711	349,190	4,228,275
ԿՈՒՏԱԿԱԾ ՍԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ							
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	86,792	28,637	242,278	50,517	477,575	-	885,799
Հատկացումներ	42,881	24,121	90,483	15,193	199,443	-	372,121
Օտարում	-	-	(31,490)	-	(2,864)	-	(34,354)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	129,673	52,758	301,271	65,710	674,154	-	1,223,566
Հատկացումներ	35,639	10,754	105,915	23,577	136,557	-	312,442
Օտարում	-	(155)	(15,204)	(36,960)	(12,115)	-	(64,434)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,312	63,357	391,982	52,327	798,596	-	1,471,574

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ.գծով կապ. ներդր.	Համակարգ. տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա միջոցներ	Գրասենյակային սարքավորում և այլ հիմնական միջոցներ	Անավարտ շիրարարություն	Ընդամենը
ՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ԱՐԺԵՔ							
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	919,620	311,542	243,219	122,015	811,115	349,190	2,756,701
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	952,127	284,670	243,558	63,961	711,333	335,273	2,590,922
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	845,219	293,937	216,660	15,848	629,087	93,484	2,094,235

Ակտիվների վերագնահատում

Շենքերի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2006թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատում 186,583 հազար դրամ գումարով: Շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց շուկայական արժեքից:

Եթե շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 870,706 հազար դրամ (2010թ՝ 894,243 հազար դրամ):

Անբողջությամբ մաշված ակտիվներ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված անբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 556,566 հազար դրամ (2010թ.՝ 413,479 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 371,161 հազար դրամ, այդ թվում 45,438 հազ. դրամ՝ շենքեր (2010թ՝ 260,006 հազար դրամ, այդ թվում 20,400 հազ. դրամ՝ շենքեր): Տվյալ հիմնական միջոցները չեն ամորտիզացվում և դասակարգված են համաձայն իրենց դասերի:

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2011թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու գծով:

21 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	37,258	60,382	76,854	174,494
Ավելացում	240,200	93,585	-	333,785
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	277,458	153,967	76,854	508,279
Ավելացում		32,203		32,203
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	277,458	186,170	76,854	540,482
ԱՍՈՐՏԻԶԱՑԻԱ				
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	8,604	24,834	38,584	72,022
Մասհանումներ	6,601	9,117	7,661	23,379
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,205	33,951	46,245	95,401
Մասհանումներ	13,638	29,129	2,139	44,906
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,843	63,080	48,384	140,307
ՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ԱՐԺԵՔ				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	248,615	123,090	28,470	400,175
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	262,253	120,016	30,609	412,878
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,654	35,548	38,270	102,472

Պայմանագրային պարտավորություններ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով:

2011թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2011թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտոնագրերում ներառված է 217,865 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով վճարային քարտերով գործառնությունների քլիրինգային գործընթացի իրականացման համար համապատասխան ծրագրերի արտոնագիրը (2010թ.-ին՝ 231,337 հազ. դրամ):

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	180,255	146,412
Հաշվարկներ աշխատակիցների հետ	1,280	275
Դեպոզիտներ այլ կազմակերպություններում	500	500
	182,035	147,187
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(3,962)	(2,303)
	178,073	144,884
Բռնագանձված գրավ	1,859,362	977,868
Կանխավճարներ այլ հարկերի գծով	-	59,626
Նյութեր	31,784	22,454
Այլ ակտիվներ	110,903	-
Ընդամենը այլ ակտիվներ	2,180,122	1,204,832

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	5,729
Տարվա ծախս	8,104
Դուրս գրում	(11,530)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,303
Տարվա ծախս	17,241
Դուրս գրում	(15,582)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,962

23 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստորադաս փոխառություն ՀՀ ԿԲ-ից	2,810,209	2,810,209
ՀՀ ԿԲ-ի հետ հետգնման պայմանագրեր	917,483	-
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	787,429	785,232
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	73,207	133,200
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,171,435	2,922,625
Ավանդներ այլ ֆինանսական կազմակերպություններից	717,065	296,491
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,476,828	6,947,757

Ստորադաս փոխառությունը տրված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2010 թ-ի ապրիլի 6-ին, որի մարման ժամկետը սահմանված է 2015 թ-ի ապրիլի 6-ը: Տոկոսադրույքը կազմում է 7.5%:

2011թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների համար միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.2 % (2010թ.՝ 11.4%), ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 9% (2010թ.՝ Եվրո արժույթով պարտավորությունների համար 5.1 %):

Ֆինանսական կազմակերպություններից բոլոր ավանդներն ու վարկերը ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամականաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2010: ոչինչ):

24 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ կառավարություն		
Վարկեր	15,589,197	18,940,519
	15,589,197	18,940,519
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	5,388,769	8,649,164
Ժամկետային ավանդներ	10,675,235	6,535,352
	16,064,004	15,184,516

Ֆիզիկական անձինք

Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	4,003,483	3,635,759
Ժամկետային ավանդներ	54,933,404	44,479,127
	58,936,887	48,114,886
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	90,590,088	82,239,921

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներկայացնում են վարկեր ստացված Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամի «Գյուղական Տարածքների Տնտեսական զարգացման ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով» և «Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի» շրջանակներում իրականացվող ֆինանսավորման նպատակով: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների գծով 5,127,209 հազար դրամ գումարով (2010թ. 5,145,618 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 8,240,641 հազար դրամ (2010թ. 10,114,976 հազար դրամ) կամ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 11% (2010թ. 16%):

Հաշվետու ժամականաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2010: ոչինչ):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարությունից ստացված ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կամում է 6.4%, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4% (2010թ.՝ նույնը):

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 8.6%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 9.1%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 8.4%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 12.4%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 8.7%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 6.4%, (2010թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 8.56%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 8.3%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 9.3%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 12.4%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 8.8%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 7.3%):

25 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	84,285	93,311
Վճարվելիք գումարներ շահաբաժինների գծով	196,070	152,021
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	62,031	104,413
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	342,386	349,745
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	166,993	32,103
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	9,794	10,896
	176,787	42,999
Ընդամենը այլ պարտավորություններ	519,173	392,744

26 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	Ակտիվ		Պարտավորություն	
	2011	2010	2011	2010
Գրավադրված արժեթղթեր ՀՀ ԿԲ-ում (Ծանոթ. 19, 23)	917,393	-	917,483	-
	917,393	-	917,483	-

27 Սեփական կապիտալ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 11,400,700 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 10,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 859,970 դրամ անվանական արժեքով և 10 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 280,100,000 դրամ անվանական արժեքով:

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնենասր վճարված կապիտալում
Ռիպատոնսո Հոլդինգս Լիմիթեդ	8,599,700	75.4
Ջաքարյան Գագիկ Տիգրանի	1,400,500	12.3
Պիսկով Գեորգի Իգորի	1,400,500	12.3
	11,400,700	100

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2010թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 2,801,000 հազար դրամ գումարով:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում: Արտոնյալ բաժնետոմսերը

ունեն մեկ ձայնի իրավունք միայն Բանկի վերակազմակերպման կամ լուծարման և կանոնադրության մեջ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները սահմանափակող որոշումների իրականացման հարցերում և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում ճանաչված շահաբաժինների գումարը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 196,070 հազար դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 152,021 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

28 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները ներկայացնում են պահանջներ այնպիսի գործարքների կամ հաշվառման մեթոդների նկատմամբ, որոնց նկատմամբ նախկինում դիտողություններ չեն եղել: Դրա հետևանքով կարող են առաջանալ լրացուցիչ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումները կարող են ընդգրկել հաշվետու տարվան անմիջապես նախորդող 3 տարի ժամանակաշրջան, սակայն որոշ պայմաններում ստուգումները կարող են ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

